ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ստեփանակերտ, 4 Յունիսի, ՄՏԿ.- Հադրութի շրջանից շարունակում են ստացուել մտահոգիչ եւ տագնապալի լուրեր: Ադրբեջանական ուղղաթիռներից գնդակոծուում եւ ռմբակոծուում են տեղահանութիւնից յետոյ վերաբնակեցուող Առաքիլ, Բանազուր, Խծաբերդ, Քարագլուխ, Միլքիդարա եւ այլ գիւղեր, որի հետեւանքով վիրաւորուել են երկու հայ: Երեկ երեկոյեան սկսուել է Դոլանլար եւ Քարագլուխ գիւղերի բնակեցումը ազերիներով:

Հին Թաղլար գիւղի վրայ յարձակուել են ՕՄՕՆը եւ չորրորդ բանակի ստորաբաժանումները: Գիւղում տեղի է ունենում թալան: Գիւղացիները փախչում են դէպի Խծաբերդ:

Հին Թաղլար գիւղի պարետը դիմել է Ստեփանակերտի պարետին օգնութեան խնդրանքով, սակայն վերջինս պատասխանել է, որ օգնութիւնը կը լինի 2 օրից յետոյ:

Դոլանլար եւ Առաքիլ գիւղերի տները քարուքանդ են անում, թալանում են մնացած ապրանքը:

Նախնական տուեալներով ձերբակալուած են 6 հոգի, որոնցից 3ը գտնւում են Ջաբրայիլում. նրանցից մէկը վիրաւոր է:

-Յունիսի 2ին զինուորական պարետատունը, հիմնուելով ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարութեան ղեկավարութեան հրահանգի վրայ, հրամայել է բոլոր գիւղերից հանել զինուորական պարեկակէտերը եւ հեռացնել բնակչութեանը: Նորից բռնի կերպով տեղահանում են հայկական գիւղերի բնակիչները, ազերիներով բնակեցնելու նպատակով-, ասում է երեկ ԽՍՀՄ ՊԱԿի նախագահ Կրիւչկովին եւ ՆԳ նախարար Պուգոյին յղուած հեռագրի մէջ, որը ստորագրել են Արցախից ընտրուած ԽՍՀՄ ժողովրդական չորս պատգամաւորներ:

Զինուորական պարետատնից տեղեկանում ենք, որ գիւղերում տեղաւորուած ԽՍՀՄ Ներքին զօրքերի պարեկակէտերը պիտի փոխարինուեն խորհրդային բանակի ստորաբաժանումներով: ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորներ Զօրի Բալայեանը, Վահան Գաբրիէլեանը, Բորիս Դադամեանը եւ Հենրիկ Պողոսեանը ԽՍՀՄ ղեկավարութեանը ուղղուած հեռագրում նշում են, որ -արտակարգ դրութեան շրջանում Ներքին զօրքերի փոխարինումը Ադրբեջանում տեղաբաշխուած խորհրդային բանակի ստորաբաժանումներով անթոյլատրելի է, քանզի չորրորդ բանակը հիմնականում կազմաւորուած է ադրբեջանցիներից- Յիշենք, որ չորրորդ բանակի ստորաբաժանումների անձնակազմի գրեթէ 60 տոկոսը ազերիներ են, որոնց ուժերով իրագործուել էր Գետաշէնի եւ Մարտունաշէնի գրաւումը եւ Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ գիւղերի աւերումը:

Մարզում վերսկսուել են ապօրինի ձերբակալութիւնները: Յունիսի 1ից լոյս 2ի գիշերը, Ստեփանակերտում ձերբակալուել են չորս հայորդի, որոնցից մէկը քաղաքի ոստիկանատան պատասխանատու հերթապահ մայոր Հ. Շահբազեանն է, որին առեւանգել են աշխատավայրից: Յատկանշական է, որ այս ձերբակալութիւններին մասնակցել են զինուորականները երկու զրահամեքենաներով: Ձերբակալութեան ականատես ոստիկանատան հերթապահի օգնականը յայտնեց, որ ինքը կարծելով թէ ձերբակալութիւնը կատարւում է Պոլիանիշկոյի յատուկ խմբի ուժերով, ահազանգել է պարետատուն, որտեղից պատասխանել են, որ զինուորական պարետ ժուկովը տեղեակ է ձերբակալութիւններից, որոնք կատարւում են Ադրբեջանի դատախազութեան ցուցմունքով: